<<Շիրակացու ճեմարան>>միջազգային գիտակրթական համալիր
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
**2022-2023**

1. Ո՞ր շարքում են բնակիչները դասավորված ճիշտ նույն հաջորդականությամբ, ինչ նրանց հետևյալ ապրելատեղերը՝ փեթակ, որջ, փչակ, ջուր, բույն: Ընդգծի՛ր պատասխանը(0,5 միավոր)

ա) մեղու, արջ, սկյուռ, շուն, ձուկ
բ) մեղու, արջ, ձուկ, սկյուռ, շուն
գ) մեղու, շուն, սկյուռ, ձուկ, արջ
դ). մեղու, արջ, սկյուռ, ձուկ, շուն
ե) մեղու, արջ, շուն, ձուկ, սկյուռ

2. Ո՞ր բառի տառերի վերադասավորումով նոր բառ չես կազմի: Նշի՛ր ճիշտ պատասխանը :(0,5 միավոր)

ա/մարդ    բ/ վտակ    գ/ սեղան    դ/ծառա    ե/ կավիճ

3. Նախկինում ի՞նչ գույն ունեին պիտակները:Գտի՛ր պատասխանը նախադասության մեջ: (0,5 միավոր)

Արո՛ւս, պիտակները խամրել են:

——————————————————

4. Պատասխանի տարբերակներից որի՞ ոսկին է զարդ պատրաստելու համար պիտանի: Նշի՛ր ճիշտ պատասխանը:(0,5 միավոր)

Ա. Այս դերձակը ոսկի ձեռքեր ունի:
Բ. Ոսկի հասկերով դաշտը ծփում է:
Գ. Ոսկի մարդ է Սահակը:
Դ. Թագավորի գանձարանում ընդամենը մի քանի ոսկի էր մնացել:
Ե. Վաչագանի ոսկով ողողված երազները չէին մեկնաբանվում:

5. Ո՞ր բառն իր հոմանիշ զույգը չունի  դատարկաձեռն, նժույգ, մտերիմ, բոսոր, արահետ, երիվար, ալ, կածան, դյութիչ, ձեռնունայն, մերձավոր բերված բառերում: Կազմի՛ր այդ զույգերը : (2,5 միավոր)

դատարկաձեռն — ձեռնունայն

նժույգ — երիվար

մտերիմ —— մերձավոր

բոսոր —— ալ

արահետ —— կածան

6. Գնդիկների վրա գրված էին հախթական, ճեպընթաց, զղչալ, միջօրէ, որևիցէ, արցյունք, ինչևէ, մրչուններ, ութանասուն, տասներեքերորդ, բացօթյա, համբույր, խոնարհվել, ակնթարթ, մեղմօրոր, ճանապարհորդել բառերը: Աշակերտը սխալ  ուղղագրությամբ բառերով գնդիկները հավաքեց ծղոտե զամբյուղում և ուղղեց դրանք: Քանի՞ գնդիկ հավաքվեց ծղոտե զամբյուղում: Գրի՛ր զամբյուղի ուղղված բառերը: (4 միավոր)

Պատասխան՝ 8 բառ՝հաղթական , զղջալ, միջօրե, որևիցե, արդյունք մրջյուններ, ութսուն, տասներեքերորդ :

——————————————————————————————————————

————————

7. «Մարդը երգեց ահագին» նախադասության բառերի տեղերը չփոխելով՝ կարելի է նոր նախադասություն ստանալ՝ բառի բոլոր տառերով այլ բառ կազմելով: Գրի՛ր ստացված նախադասությունը:(0,5 միավոր)

Պատասխան՝ Դրամը գերեց ագահին:

8. Անվանիր մեկ բառով (2,5 միավոր)

Մեղուների խումբ-պարս

Ձիերի խումբ__երամակ

Ձկների խումբ__վտառ

Այծերի խումբ__հոտան

Օձերի խումբ__նքողնակ

9. Գրի՛ր տրված դարձվածքների իմաստը և մեկը գործածի՛ր նախադասության մեջ:(1միավոր)

գրի սևն ու սպիտակը ջոկել ____գրագետ լինել

հավասարեցնել գրոյի__արժեզրկել

ինչպես ձուկը ջրում__անկաշկանդ

________________________________________

________________________________________

____________________

10. Ավարտի՛ր առածները: (2,5միավոր)

Ում սայլին նստի, նրա հորովելը կերգի:

Մի հիմար քարը ծովը գցեց, տասը խելոք չկարողացան հանել:

Հացը հացթուխին տուր, մեկն էլ ավել տուր:

Սարը սարին չի հանդիպի, մարդը մարդուն կհանդիպի:

Եղբայրը եղբոր աղբյուրն է, որ ծարավի, պաղ ջուրն է:

**11.** Վերևում տրված առած-ասացվածքներից որևէ մեկը դարձրո՛ւ վերնագիր և պատմությո՛ւն հյուսիր: (5միավոր)

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

________________________________________

Ընդհանուր միավոր————————